**ENGAGEMENT TERMS AND FEE AGREEMENT**

between

(1) **The Ministry of Justice of the Republic of Armenia**, 3/8 Vazgen Sargsyan str., Yerevan 010, Republic of Armenia

- hereinafter referred to as "**Client**"-

(2) **CMS Hasche Sigle**

Nymphenburgerstrasse 12, 80335 Munich, Germany and 27/F, 8 Queen's Road Central, Central, Hong Kong S.A.R.

- hereinafter referred to as "**CMS**"-

## I. ENGAGEMENT TERMS

### 1. MANDATE

1.1 We refer to the correspondence between the Client and CMS dated 1, 8 and 16 November 2017.

1.2 On the terms set out in the correspondence, the Client has instructed CMS, and CMS has accepted, to represent the interest of the Republic of Armenia in an ICSID arbitration commenced by Edmond Khudyan and Arin Capital & Investment Corp. against the Republic of Armenia (ICSID Case No. ARB/17/36).

1.3 The partner at CMS responsible for the Client's matters is Dr. Nicolas Wiegand.

1.4 CMS's co-counsel in this matter is Concern Dialog Law Firm, 1 Charents str., office 207, Yerevan, 0025, Republic of Armenia ("**Concern Dialog**") with the partner in charge being Dr. Aram Orbelyan.

### 2. FEES

The engagement of CMS in the above-referenced matter is to be financed through the State budget of the Republic of Armenia and is subject to the fee agreement as set out in Section II below.

### 3. LIABILITY TOWARDS THIRD PARTIES

3.1 The legal advice and services rendered by CMS are addressed exclusively to the Client.

3.2 CMS undertakes no liability or responsibility towards third parties, except where such third parties have explicitly been included in the scope of liability towards the Client by written agreement.

## 4. ELECTRONIC COMMUNICATIONS

The communication between CMS and the Client may be via unencrypted e-mail. The Client is aware that unauthorized third parties may obtain knowledge of the contents of e-mails sent without encryption. CMS therefore offers standard e-mail encryption. To the extent and for as long as the Client sends e-mails to CMS unencrypted, in the knowledge of the risks of unencrypted e-mail communications, the Client declares its agreement that CMS may also send unencrypted e-mails including attached documents in the course of providing its services.

## 5. LIMITATION OF LIABILITY

5.1 The Client's claim for compensation of losses caused by CMS under or in connection with the mandate shall be limited in cases of simple negligence to USD 15,000,000 (in words: fifteen million USD), unless otherwise provided by agreement in writing in any individual case. This limitation of liability shall also apply if there should be a liability towards persons other than the Client. Where there is more than one Client and/or more than one person entitled to a claim, this claim shall again be limited in total to USD 15,000,000 (in words: fifteen million USD). The liability for losses resulting from death, personal injury or damage to health shall remain unaffected.

5.2 Where more than one breach of duty results in a single loss or losses arise in one or more consecutive years, this shall also be considered as one single damage event. A repeated action or omission based on the same or similar sources of error shall be deemed a single breach of duty, when the matters concerned are legally or commercially connected to each other.

5.3 Where several causes of a loss coincide, CMS shall be liable, subject to the maximum liability amount in clause 5.1 above, always only to the extent to which the fault of CMS contributed to the occurrence of the loss in proportion to the other causes; this shall apply in particular in the event of work carried out jointly together with other professional advisors.

## 6. CONFIDENTIALITY

6.1 CMS, Concern Dialog, and the Client agree to treat the Engagement Terms as strictly confidential and not to disclose such terms to third parties – including after the end of the client relationship – without the prior written consent of the other party, except to the extent they are required to disclose the Engagement Terms pursuant to statutory or administrative regulations.

6.2 CMS belongs to the CMS network of independent law firms. To the extent necessary, in particular in order to identify potential conflicts of interest and for general client relationship purposes, CMS shall be entitled to exchange client-related data with other CMS member law firms as well as with CMS Legal EEIG/EWIV.

## II.
## FEE AGREEMENT

### 1. FEES

1.1 CMS shall be paid a fee for the services rendered pursuant to the Engagement Terms which shall be calculated on the basis of time spent on the matter, whereby the shortest unit of time invoiced shall be six minutes.

1.2 CMS shall represent the Client in this matter along with CMS's Armenian co-counsel Concern Dialog. Concern Dialog will submit its invoices in this matter to CMS on a monthly basis. CMS shall reflect Concern Dialog's fees in its monthly invoices to the Client. CMS will pay Concern Dialog out of the funds it will receive from the Client upon payment of CMS's invoices.

1.3 CMS, Concern Dialog and the Client have agreed on hourly rates for the lawyers involved as well as fee caps for each phase of the arbitral proceedings. For the avoidance of doubt, the USD amounts shall be authoritative for the purpose of the capped fee budgets. All amounts are exclusive of VAT (if applicable) or any other taxes payable by CMS in Armenia.

1.4 The agreed hourly rates for the proposed team members shall be the following discounted rates:

| Counsel | Fee earner | Standard hourly rate | Discounted hourly rate |
|---|---|---|---|
| CMS | Prof Dr Klaus Sachs | EUR500<br>USD580 | EUR450<br>USD520 |
| | Dr Wiegand | EUR450<br>USD520 | EUR400<br>USD470 |
| | Ms Boltenko | EUR350<br>USD405 | EUR320<br>USD370 |
| | Ms Schwalb | EUR320<br>USD370 | EUR290<br>USD340 |
| | Ms Pramod | EUR290<br>USD340 | EUR270<br>USD310 |
| Concern Dialog | Dr Aram Orbelyan | USD300 | USD250 |
| | Mr. Roustam Badasyan | USD250 | USD200 |
| | Ms. Lilit Karapetyan | USD250 | USD200 |
| | Associates of the firm upon need | USD200 | USD150 |

1.5 CMS reserves the right, after consultation with the Client, to amend the proposed team of counsel and associates should this be required for the better handling of the case or for logistical reasons, it being understood that this does not apply to the lead partners Prof. Sachs and Dr. Wiegand, and that it will not affect the overall fee structure and fee cap.

1.6 For the purpose of the fee caps agreed between the Client, Concern Dialog and CMS, the phases of the arbitration proceedings shall be defined as follows:

*First Phase: Assessment and Constitution of the Tribunal – Fee Cap USD 150,000*

The first phase of the arbitration will consist of, but not be limited to:

- constitution of the arbitral tribunal;
- selection of chairperson;
- reviewing and assessing the case file;
- legal and factual research;
- gathering evidence;
- developing case theory and strategy;
- first procedural conference and procedural timetable;
- identification of witnesses and experts;
- preparation of any submissions required for bifurcation of the jurisdictional and merits phases; and
- any other tasks reasonably required for the comprehensive preparation of the case and constitution of the tribunal.

*Second Phase: Jurisdictional Objections and Admissibility Objections (assuming the case is bifurcated) – Fee Cap USD 150,000; in case of successful Rule 41(5) Objection, the Fee Cap shall be USD 100,000*

The second phase of the arbitration will consist of, but not be limited to:

- preparation of the memorial on jurisdictional challenge;
- preparation of reply on jurisdictional challenge;
- jurisdictional hearing;
- post-hearing submissions, if required; and
- any other tasks reasonably required at the jurisdictional objections stage of the proceedings.

*Third Phase: Merits (assuming the case is bifurcated) – Fee Cap USD 550,000*

The third phase of the arbitration will consist of, but not be limited to:

- preparation of evidence;

- document production and disclosure;
- preparation of witness statements and expert reports;
- preparation of counter-memorial on the merits;
- review the Claimants' reply;
- preparation of rejoinder on the merits;
- hearing and post hearing submissions; and
- any other tasks reasonably required at the merits stage of the proceedings.

In the case of a joint jurisdiction and merits hearing (i.e. combined Second and Third Phase as per above), the total capped fee shall be USD 700,000.

1.7 The capped fees listed for each phase of the arbitration are inclusive of all communication and travel expenses (except for Concern Dialog) that may be incurred.

1.8 The language for communication with the Client shall be English. The Client agrees to a capped budget of USD 25,000 for the translation of fact finding documents. The Client is responsible for experts' fees, local counsel and witness travel expenses. These fees and expenses will need prior approval by the Ministry of Justice.

## 2. INVOICING

2.1 Invoices shall be issued monthly and together with a breakdown of the services provided and the time spent within this period by the relevant attorney. CMS will reflect Concern Dialog's invoices as disbursements in its monthly invoices.

## 3. DEPOSIT

3.1 After conclusion of this Agreement, the Client shall pay a deposit to CMS in the amount of USD 60,000. This amount is exclusive of VAT (if applicable) or any other taxes payable by CMS in Armenia.

# III.
# TERMINATION AND FINAL PROVISIONS

## 1. TERMINATION

1.1 This Agreement may be terminated by the Client or by CMS at any time by giving one month's notice.

1.2 Concern Dialog shall be entitled to exit this agreement subject to prior consultation with the Client.

1.3 All fees and expenses payable prior to the termination shall be paid before the final day of these Engagement Terms.

1.4 The extraordinary right to terminate for good cause shall remain unaffected.

## 2. FINAL PROVISIONS

2.1 This Agreement shall be governed by German law.

2.2 Any dispute, controversy, difference or claim arising out of or relating to this Agreement, including the existence, validity, interpretation, performance, breach or termination thereof or any dispute regarding non-contractual obligations arising out of or relating to it shall be finally resolved under the Rules of Arbitration of the International Chamber of Commerce in force when the Notice of Arbitration is submitted.

2.3 The law of this arbitration clause shall be German law. The seat of arbitration shall be Paris. The number of arbitrators shall be one.

2.4 Verbal side agreements do not exist. Amendments or additions to this Agreement must be made in writing. This also applies to amendments of this written form requirement.

2.5 Should one or more provisions of this Agreement be or become invalid or unenforceable, this shall not affect the validity and enforceability of the remaining provisions. In place of the invalid or unenforceable provision, such legally valid and enforceable provision shall apply which reflects as closely as commercially possible the spirit and purpose of the invalid or unenforceable provision.

2.6 The parties agree that this Agreement shall apply to all services set forth above and rendered by CMS for and on behalf of the Client, including any such services rendered prior to the date of this agreement. If different fee levels have applied to services already provided, these shall remain unaffected.

2.7 This Agreement is concluded in English and Armenian. In the event of inconsistency between English and Armenian texts, the English text shall prevail.

[the remainder of this page is left blank. The signature page is after the Armenian text.]

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

(1) Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության, Հայաստանի Հանրապետություն, 010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8

- այսուհետ՝ «Պատվիրատու»

(2) **CMS Hasche Sigle-ի**

Գերմանիա, 80335 Մյունխեն, Նիմֆենբուրգերշտրասսե 12 և Հոնգ Կոնգ, Կենտրոնական, Կենտրոնական Քուինս փողոց 8, 27/F

- այսուհետ՝ «CMS»

միջև

## I.
## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### 1. ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Հղում է արվում Պատվիրատուի և CMS-ի 2017 թ.-ի Նոյեմբերի 1-ի, 8-ի և 16-ի նամակագրությանը։

1.2 Նամակագրությամբ սահմանված պայմաններով, Պատվիրատուն հանձնարարել է CMS-ին, և CMS-ը ընդունել է ներկայացնել Հայաստանի Հանրապետության շահերը Էդմոն Խուդյանի և «Արին Կապիտալ ընդ Ինվեսթմենթս» ընկերության կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության նախաձեռնած ICSID արբիտրաժի շրջանակներում (ICSID գործ թիվ ARB/17/36)։

1.3 CMS-ի բաժնետերը, որը պատասխանատու է սույն գործով հանդիսանում է Նիկոլաս Վիգանդը.

1.4 CMS-ի համախորհրդատուն սույն գործով հանդիսանում է Կոնցեռն Դիալոգ Փաստաբանական Ընկերությունը, ՀՀ, 0025, ք. Երևան, Չարենցի 1, 207 սենյակ, (Կոնցեռն Դիալոգ), պատասխանատու բաժնետեր՝ Արամ Օրբելյան։

## 2. ՎՃԱՐՆԵՐ

CMS-ի ներգրավումը վերոնշյալ գործով ֆինանսավորվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, համաձայն ստորև Բաժին 2-ում ներկայացված վճարների կարգավորմանը:

## 3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋ

3.1 CMS-ի կողմից մատուցված իրավական խորհրդատվությունը և ծառայությունները բացառապես ուղղված են Պատվիրատուին:

3.2 CMS-ը հանձն չի առնում որևէ պարտավորություն կամ պատասխանատվություն երրորդ անձանց առաջ, բացառությամբ եթե նման երրորդ անձինք բառացիորեն գրավոր պայմանագրով ներգրաված են Պատվիրատուի հանդեպ ունեցած պատասխանատվության շրջանակում:

## 4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

CMS-ի և Պատվիրատուի միջև հաղորդակցությունը կարող է լինել չկոդավորված էլեկտրոնային նամակի միջոցով: Պատվիրատուն տեղեկացված է, որ չարտոնված երրորդ անձինք կարող են տեղեկատվություն ստանալ էլեկտրոնային նամակի պարունակության մասին, որոնք ուղարկված են առանց կոդավորման: Ուստի, CMS-ը առաջարկում էէլեկտրոնային նամակի դասական կոդավորում: Այնքանով, որքանով Պատվիրատուն CMS-ին ուղարկում է էլեկտրոնային նամակներ առանց կոդավորման, գիտակցելով ոչ կոդավորված էլեկտրոնային նամակագրության ռիսկը, Պատվիրատուն հայտնում է իր համաձայնությունը, որ CMS-ը ևս ծառայությունների մատուցման ընթացքում կարող է ուղարկել ոչ կոդավորված էլեկտրոնային նամակներ, այդ թվում կից փաստաթղթեր.

## 5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

5.1 CMS-ի կողմից հանձնարարության շրջանակներում կամ դրա հետ կապված պատճառված վնասի հատուցման Պատվիրատուի պահանջը պարզ անփութության դեպքերում սահմանափակվում է 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլարի, եթե այլ բան պայմանագրով գրավոր սահմանված չէ յուրաքանչյուր առանձին դեպքում: Պատասխանատվության սահմանափակումը կիրառվում է նաև եթե կա է պատասխանատվություն Պատվիրատուից բացի այլ անձանց նկատմամբ: Այն դեպքում, եթե կա մեկից ավելի Պատվիրատու և/կամ պահանջի իրավունք ունեցող մեկից ավելի անձ, պահանջը կրկին պետք է սահմանափակված լինի ամբողջության 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլարի սահմաններում: Սույնը ազդեցություն չի

ունենում մահվան, անձնական վնասների կամ առողջությանը պատճառված վնասների հետևանքով առաջացած պատասխանատվության վրա:

5.2 Այն դեպքում, երբ պարտավորության մեկից ավելի խախտումներ հանգեցնում են մեկ վնասի, կամ վնասներ առաջանում են մեկ կամ մեկից ավելի հաջորդական տարիների ընթացքում, նշվածը պետք է հանդիսանա մեկ առանձին վնասի դեպք: Կրկնվող գործողությունը կամ անգործությունը հիմնված նույն կամ նմանատիպ սխալմունքի աղբյուրի վրա պետք հանդիսանա պարտավորության խախտման մեկ դեպք, երբ համապատասխան դեպքերը իրավական կամ առևտրային առումով կապված են միմյանց հետ:

5.3 Երբ վնասի մի քանի առիթներ համընկնում են, CMS-ը 5.1 կետով սահմանված պատասխանատվության առավելագույն գումարի սահմաններում, միշտ պատասխանատու է միայն այնքանով որքանով CMS-ի գործողությունները հանգեցրել են վնասի առաջացմանը այլ պատճառների հետ համամասնորեն. նշվածը վերաբերում է մասնավորապես աշխատանքներին, որոնք իրականացվել են այլ մասնագիտացված խորհրդատուների մասնակցությամբ:

**6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ**

6.1 CMS-ը, Կոնցեռն Դիալոգը և Պատվիրատուն համաձայնում են Համագործակցության պայմանները պահել խիստ գաղտնի և դրանք չբացահայտել երրորդ անձանց, այդ թվում Պատվիրատուի հետ հարաբերությունների ավարտից հետո առանց մյուս կողմի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի երբ նրանք պարտավոր են բացահայտել Համագործակցության պայմանները օրենսդրության կամ վարչական կարգավորումների համաձայն:

6.2 CMS-ը պատկանում է անկախ իրաբանական ընկերությունների CMS խմբին: Այնքանով, որքանով անհրաժեշտ է, մասնավորապես հնարավոր շահերի բախում հայտնաբերելու և ընդհանուր հաճախորդների հետ հարաբերությունների նպատակով, CMS-ը իրավունք ունի փոխանակել Պատվիրատուին վերաբերող տեղեկատվությունը CMS անդամ այլ իրավաբանական ընկերությունների հետ, ինչպես նաև CMS Legal EEIG/EWIV հետ:

# II.
# ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

## 1. ՎՃԱՐՆԵՐ

1.1 CMS-ին վճարվում է վճար Համագործակցության Պայմանների համաձայն ծառայություններ մատուցելու համար, որը հաշվարկվում է սույն գործի վրա ծախսված ժամանակի համաձայն, որտեղ հաշվարկված ամենակարճ րոպեն պետք է լինի վեց րոպեն:

1.2 CMS-ը պետք է ներկայացնի Պատվիրատուին սույն գործով CMS-ի հայկական համախորհրդատու Կոնցեռն Դիալոգի հետ մեկտեղ: Կոնցեռն Դիալոգը ներկայացնում է իր հաշիվները CMS-ին ամսական կտրվածքով: CMS-ը Պատվիրատուին ներկայացնում է Կոնցեռն Դիալոգի վճարները իր ամսական հաշիվներում: CMS-ը կվճարի Կոնցեռն Դիալոգին այն միջոցներից, որը կստանա Պատվիրատուից CMS-ի հաշիվների վճարման արդյունքում:

1.3 CMS-ը, Կոնցեռն Դիալոգը և Պատվիրատուն համաձայնություն են ձեռք բերել ներգրավված իրավաբանների ժամավճարի վերաբերյալ, ինչպես նաև արբիտրաժային վարույթի յուրաքանչյուր փուլում վճարի սահմանների վերաբերյալ: Կասկածներից խուսափելու համար, ԱՄՆ դոլարով նշված վճարները զերակայում են վճարների սահմանների բյուջեի առումով: Գումարները չեն ներառում ԱԱՀ-ն (եթե կիրառելի է) և որևէ այլ հարկ, որը CMS-ի կողմից վճարվելու է ՀՀ-ում:

1.4 Թիմի առաջարկված անդամների համար համաձայնեցված ժամավճարները հանդիսանում են ստորև ներկայացված զեղչված արժեքները՝

| Խորհրդատու | Վճարը Վաստակող | Ստանդարտ ժամավճար | Զեղչված ժամավճար |
|---|---|---|---|
| CMS | Պրոֆ. Կլաուս Զաքս | 500 եվրո<br>580 դոլար | 450 Եվրո<br>520 դոլար |
| | Դր. Վիգանդ | 450 եվրո<br>520 դոլար | 400 եվրո<br>470 դոլար |
| | Տկն. Բոլտենկո | 350 եվրո<br>405 դոլար | 320 եվրո<br>370 դոլար |
| | Տկն. Շվայբ | 320 եվրո<br>370 դոլար | 290 եվրո<br>340 դոլար |
| | Տկն. Պրամոդ | 290 եվրո | 270 եվրո |

| | | | |
|---|---|---|---|
| | | 340 դոլար | 310 դոլար |
| Կոնցեոն Դիալոգ | Արամ Օրբելյան | 300 դոլար | 250 դոլար |
| | Ռուստամ Բադասյան | 250 դոլար | 200 դոլար |
| | Լիլիթ Կարապետյան | 250 դոլար | 200 դոլար |
| | Անհրաժեշտության դեպքում այլ Ընկերության այլ իրավաբաններ | 200 դոլար | 150 դոլար |

1.5 CMS-ը պահպանում է իր իրավունքը, Պատվիրատուի հետ խորհրդակցելուց հետո փոփոխել թիմի առաջարկված խորհրդատուներին և իրավաբաններին եթե նշվածը անհրաժեշտ է գործի առավել լավ կատարման կամ լոգիստիկայի դրդապատճառներից ելնելով, միաժամանակ հաշվի առնելով, որ նշվածը չի վերաբերում առաջատար բաժնետերեր Պրոֆ. Զաքսին և Դր. Վիզանդին, և որ նշվածը ազդեցություն չի ունենա վճարների ընդհանուր կառուցվածքի և վճարների սահմանների վրա:

1.6 Պատվիրատուի, Կոնցեռն Դիալոգի և CMS-ի միջև համաձայնեցված վճարների սահմների առումով, արբիտրաժային վարույթների փուլերը պետք է սահմանվեն հետևյալ կերպ

*Առաջին փուլ՝ Գնահատում և Տրիբունալի Նշանակումը՝ Վճարի սահման 150,000 ԱՄՆ դոլար*

Արբիտրաժի առաջին փուլը կկազմի, չսահմանափակվելով՝

- Արբիտրաժային տրիբունալի նշանակում,
- Նախագահի ընտրություն,
- Գործի պանակի ուսումնասիրություն և գնահատում,
- Իրավական և փաստական ուսումնասիրություն,
- Ապացույցների հավաքագրում,
- Գործի թեորիայի և մարտավարության մշակում,
- Առաջին ընթացակարգային խորհրդակցություն և ընթացակարգային ժամանակացույց,
- Վկաների և փորձագետների հայտնաբերում,
- Իրավասության և գործի ըստ էության քննության փուլերի տարանջատման համար անհրաժեշտ նկատառումների պատրաստում, և
- Այլ գործողություններ, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են գործի բազմակողմանի պատրաստման և տրիբունալի նշանակման համար:

*Երկրորդ փուլ՝ Իրավասության վերաբերյալ և ընդունելիության վերաբերյալ առարկություններ (ենթադրելով, որ փուլերը տարանջատվել են)՝ վճարի սահման 150,000 ԱՄՆ դոլար, 41(5) կանոնի բարեհաջող առարկության դեպքում վճարի սահման՝ 100,000 ԱՄՆ դոլար:*

Արբիտրաժի երկրորդ փուլը կկազմի, չսահմանափակվելով՝

- Իրավասության առարկության վերաբերյալ մեմորիալի պատրաստում,
- Իրավասության առարկության վերաբերյալ պատասխանի պատրաստում,
- Իրավասության վերաբերյալ լսում,
- Անհրաժեշտության դեպքում լսումներից հետո նկատառումների պատրաստում, և
- Այլ գործողություններ, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են իրավասության վերաբերյալ առարկությունների փուլում,

*Երրորդ փուլ: Գործի ըստ էության քննություն (ենթադրելով, որ փուլերը տարանջատվել են)՝ վճարի սահման 550,000 ԱՄՆ դոլար:*

Արբիտրաժի երրորդ փուլը կկազմի, չսահմանափակվելով՝

- Ապացույցների պատրաստում,
- Փաստաթղթերի կազմում և բացահայտում,
- Վկաների ցուցմունքների և փորձագետների եզրակացությունների պատրաստում,
- Ըստ էության քննության վերաբերյալ հակընդդեմ մեմորիալի պատրաստում,
- Հայցվորի պատասխանի ուսումնասիրություն,
- Ըստ էության քննության վերաբերյալ պատասխանի պատրաստում,
- Լսումների և լսումներից հետո նկատառումների պատրաստում, և
- Այլ գործողություններ, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են գործը ըստ էության քննության փուլում:

Այն դեպքում, եթե իրավասության և գործի ըստ էության քննության փուլերն անցկացվեն համատեղ (մասնավորապես վերևում սահմանված Երկրորդ և Երրորդ փուլերը միասին), ամբողջ վճարի սահմանը կլինի 700,000 ԱՄՆ դոլար:

1.7 Յուրաքանչյուր փուլի համար սահմանված վճարների սահմանները ներառում են հաղորդակցման և ճանապարհորդության հետ կապված բոլոր հնարավոր ծախսերը (բացառությամբ Կոնցեռն Դիալոգի ծախսերի):

1.8 Պատվիրատուի հետ հաղորդակցության լեզուն Անգլերենն է: Պատվիրատուն համաձայնում է, որ սահմանվում է 25,000 ԱՄՆ դոլար վճարի սահման՝ փաստերի որոնման փաստաթղթերի թարգմանության համար: Պատվիրատուն պատասխանատու է փորձագետների վճարների, տեղական խորհրդատուի և վկաների ճանապարհորդության ծախսերի համար:Այս վճարները և ծախսերը պետք է նախապես հաստատվեն Արդարադատության նախարարության կողմից:

**2. ՀԱՇԻՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

2.1 Հաշիվները ներկայացվում են ամսական կտրվածքով՝ համապատասխան փաստաքանի կողմից ծախսված ժամանակի ընթացքում մատուցված ծառայության նկարագրությամբ: CMS-ը կարտացոլի Կոնցեռն Դիալոգի հաշիվները որպես ծախսեր իր ամսական հաշիվներում:

**3. ԿԱՆԽԱՎՃԱՐ**

Սույն Պայմանագրի կնքումից հետո մինչև Դեկտեմբերի 30-ը Պատվիրատուն CMS-ին վճարում է կանխավճար 60,000 (վաթսուն հազար) ԱՄՆ դոլարի չափով: Գումարը չի ներառում ԱԱՀ-ն (եթե կիրառելի է) և որևէ այլ հարկ, որը CMS-ի կողմից վճարվելու է ՀՀ-ում:

## III.
## ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1. ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ**

1.1 Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Պատվիրատուի կամ CMS-ի կողմից յուրաքանչյուր պահի մյուս կողմին մեկ ամիս առաջ ծանուցելու միջոցով:

1.2 Կոնցեռն Դիալոգը իրավունք ունի դուրս գալ այս պայմանագրից՝ Պատվիրատուի հետ նախապես խորհրդակցելով:

1.3 Մինչև վաղաժամկետ լուծումը վճարվելիք բոլոր վճարները և ծախսերը պետք է վճարվեն մինչև Համագործակցության պայմանների վերջին օրը:

1.4 Բավարար հիմքերով վաղաժամկետ լուծման իրավունքը ազդեցություն չի կրում:

## 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սույն Պայմանագրի վրա տարածվում է Գերմանական իրավունքը:

2.2 Որևէ վեճ, հակասություն, տարբերություն կամ պահանջ որը ծագում է սույն Պայմանագրից կամ վերաբերում է սույն Պայմանագրին, այդ թվում դրա գոյությունը, վավերությունը, մեկնաբանումը, կատարումը, խախտումը կամ վաղաժամկետ լուծումը կամ որևէ վեճ կապված արտապայմանագրային պարտավորությունների հետ, որը ծագում է կամ կապված է դրան պետք է վերջնական լուծում ստանա Միջազգային առևտրային պալատի Արբիտրաժի կանոնների համաձայն, որը գործում է Արբիտրաժի մասին ծանուցումը ներկայացնելու պահին:

2.3 Սույն արբիտրաժային վերապահման իրավունքը Գերմանական իրավունքն է: Աբիտրաժի նստավայրը Փարիզն է: Արբիտրների քանակը պետք է լինի մեկ:

2.4 Բանավոր պայմանագրեր գոյություն չունեն: Պայմանագրի փոփոխությունները կամ լրացումները պետք է կնքվեն գրավոր: Նշվածը վերաբերում է նաև սույն գրավորության պահանջի փոփոխությանը:

2.5 Եթե սույն Պայմանագրի դրույթներից մեկը կամ մի քանիսը անվավեր են կամ դառնում են անվավեր կամ անթույլատրելի, նշվածը ազդեցություն չի ունենում մյուս դրույթների վավերության կամ թույլատրելիության վրա: Նշված անվավեր կամ անթույլատրելի դրույթների փոխարեն պետք է գործեն այնպիսի իրավականորեն վավեր կամ թույլատրելի դրույթներ, որոնք առևտրային տեսանկյունից հնարավորինս լավ արտացոլում են անվավեր կամ անթույլատրելի դրույթների էությունը և նշանակությունը:

2.6 Կողմերը համաձայնում են, որ սույն Պայմանագիրը տարածվում է վերոնշյալ բոլոր ծառայություններին, որոնք մատուցվում են CMS-ի կողմից Պատվիրատուի համար և անունից, այդ թվում այն ծառայությունների վրա, որոնք մատուցվել են CMS-ի կողմից մինչև սույն Պայմանագրի կնքումը: Եթե մինչև պայմանագրի կնքումը այլ վճարներ են գործել, նշվածը պետք է մնա անփոփոխ:

2.7 Սույն Պայմանագիրը կնքված է Անգլերեն և Հայերեն լեզուներով. Անգլերեն և Հայերեն տեքստերի միջև հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է Անգլերեն տեքստին:

[ստորագրության էջը հաջորդիվ]

Վայր/Place: Ք. Երևան

ամսաթիվ/Date 20/12/2017

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն
**The Ministry of Justice of the Republic of Armenia**

Անուն/Name: Հարությունյան

Վայր/Place: Hong Kong,

Ամսաթիվ/Date 20 December 2017

**CMS Hasche Sigle**

Անուն/Name: Dr. Nicolas Wiegand

Վայր/Place: Երևան, Ամսաթիվ/Date 20.12.2017թ.

Կոնցեռն Դիալոգ ընկերություն
**Concern Dialog Firm**

Անուն/Name: